

Եվրոպայի և Ամերիկայի հետ հաստատված հասարակական, սոցիալ-քաղաքական հարաբերությունների արդյունքում: Ըստ հեղինակների կարծիքի՝ անգլերեն օտարաբանությունների այս հոսքը առաջ է բերել մի շարք լեզվաբանական խնդիրներ:

ВОПРОСЫ УПОРЯДОЧЕНИЯ АНГЛИЙСКИХ ЗАИМСТВОВАНИЙ В ГРУЗИНСКОМ И РУССКОМ ЯЗЫКАХ

С. АСАТУРОВА
М. ГАРИБАШВИЛИ

Данная статья посвящена английским заимствованиям, все более интенсивно проникающим в грузинский и русский языки в результате установившихся общественных и социально-политических отношений с Западной Европой и Америкой. По мнению авторов статьи, такой поток англицизмов привел к возникновению ряда лингвистических проблем.

ԼԱՏԻՆԵՐԵՆ ԾԱԳՄԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Ն. Լ. ՌԱՓՅԱՆ
Գավառի պետական հալալսարանի
օտար լեզուների ամբիոնի դասախոս

Լատիներենը հսկայական ազդեցություն է ունեցել շատ լեզուների զարգացման գործում: Այն դարեր շարունակ եղել է Արևմտյան Եվրոպայի հիմնական լեզուն: Լատիներենը դադարել է խոսակցական լեզու լինելուց դեռևս միջին դարերում, սակայն Հռոմեական կաթոլիկ եկեղեցին մինչև օրս համարում է այն իր հիմնական լեզուն: Լատիներենը, պատկանելով հնդեվրոպական լեզվաընտանիքին, շատ մոտ է կելտական, գերմանական, հունական, սլավոնական լեզուներին: Ըստ լեզվաբանների, անգլերենի բառապաշարի գրեթե կեսն ունի լատիներեն ծագում: Գաղտնիք չէ, որ լատիներենն իր սեղմ և սուր մտքի շնորհիվ կատարյալ լեզու է եղել իրավաբանության համար: Լատիներեն արմատներից են ծնավորվել շատ ժամանակակից իրավաբանական տերմիններ՝ ենթարկվելով համապատասխան բառակազմական փոփոխությունների: Բազմաթիվ նախածանցներ և վերջածանցներ ծառայել են այս ոլորտում շատ նոր բառերի կազմավորմանը: Այսպես, լատիներեն արմատների և *a* – (վիճակ, ընթացք), *ab* – (հեռու, շեղված), *ad* – (դեպի, ուղղություն) նախածանցների միջոցով կազմվել են հետևյալ ածանցավոր բառերը.

Abduction - առևանգում (կնոջ), լատ. *Ab- duco-* (զողանալ, թալանել);

Adjuration - երդման արարողություն, երդում, լատ. *Ad- juro -* (երդվել, պայման դնել);

Administrator - խնամակալ, լատ. *ministratio-* (ղեկավարություն, օգնություն).

ծառայություն);

Affiliate - վերականգնել հայրական իրավունքները, լատ. *fillius* -(որդի, երեխա, ժառանգ):

Com-, con-, co- (համատեղ, միատեղ) նախածանցները, միանալով լատիներեն *mutare* (փոխանակել, փոփոխել), *cusio, cuso* = *cudo* (խփել), *cilio, onis* = *caelum* (երկինք), *struo, ere* (շարել, կառուցել), *signum* (խարան, նշան) *versio* (շրջել, ուղղել դեպի) կազմել են հետևյալ բառերը.

Commute - մեղմացնել պատիժը;

Conciliator - հաշտարար միջնորդ;

Concussion - հարկադրել վախեցնելու միջոցով;

Constructive crime - գործնություն, որն իր մեջ չի պարունակում հանցական տարրեր, բայց կարող է համարվել որպես այդպիսին;

Co - signatory - այլ անձի հետ համաձայնագիր ստորագրող անձ կամ կազմակերպություն;

Conversion - ուրիշի ունեցվածքի յուրացում:

De-, dis-, in- (առանձնցում, հեռացում) *pre-, pro-*(առաջ, նախօրոք), *re-* (նախկին վիճակին վերադարձնել) նախածանցները հանդիպում են հետևյալ բառերում.

Decedent- հանգուցյալ, լատ. *de-cedo* -(հեռանալ, գնալ, մահանալ);

Depone - ցուցմունք տալ, լատ. *de-pono*- (ցած դնել, թողնել, բացարկել);

Discontinue- գործը փակել, լատ. *dis-continuu* -(դադարեցնել, չշարունակել);

Infamy - հանցագործություն կատարելու պատճառով վատ հասարակական կարծիք ձեռք բերել, լատ. *fama ae-* (հեղինակություն, պատիվ);

Pre-audience - դատարանում իրավաբանների ելույթների հերթականությունն ըստ իրենց կոչման *audi, re-* (լսել);

Prescription - հնության իրավունք , լատ. *scribo, ere-* (գրել);

Procurator - վստահված անձ, լատ. *pro-curo*- (հոգ տանել, ապահովել);

Prohibitive - արգելված;

Prohibition - արգելում (սպիրտային խմիչքների վաճառքի), լատ. **Prohibeo** (*pro+habeo*) (գրկել, հեռու պահել, սահմանափակել);

Propound - կտակը ներկայացնել հաստատման, լատ. *Pro + pondere*, (կշռադատել, վերանայել, գնահատել);

Recess - դատավարության ընդմիջում, լատ. *re-cedo* - (հեռանալ, ետ գնալ);

Recognize - ճանաչել, լատ. *cognitio, onis-* (զննել, դիտել, ճանաչել);

Remand - կալանավորում, լատ. *re - mando* -(պատասխան ուղարկել);

Reversion - ունեցվածքի վերահանձնումը նախկին տիրոջը, լատ. *versio-* (շրջել), **Unarmed** - չզինված, լատ. *armo* (զինել);

Unconscious - անգիտակից, **Unconscionable** - անօրինական գործարք, լատ. *con-scio, ire* (գիտակցել, իմանալ):

Մեծ է այն բառերի թիվը, որոնք կազմվել են լատիներենից, ֆրանսերենից, ինչպես նաև հին անգլերենից ներթափանցած վերջածանցների միջոցով:

-*Ate* ածականակերտ և բայակերտ վերջածանցը, որն ունի (դառնալ, ինչ-որ բանով օժտված լինել) նշակությունները, **միանալով** մի շարք լատիներեն արմատներին, ծառայել է այնպիսի բառերի կազմավորմանը, ինչպիսիք են.

Affiliate - վերականգնել հայրական իրավունքները, լատիներեն *fillius* (երեխա, որդի, *ժառանգ*);

Associate - հանցակից, լատ. *As-socio*-(միավորել, կապել);

Capacitate- իրավասու դարձնել, լատ. *Capacitas*- (համատեղելիություն, ունակություն), **Exculpate**- արդարացնել, լատ. *Ex* - զրկում, *culpa* -(մեղք, հանցանք, սխալմունք);

Repudiate - մերժել, լատ. *Repudatio*- (մերժում);

Criminate - մեղադրել հանցագործություն կատարելու մեջ (լատ. *Crimen, inis* մեղադրանք, մեղք);

Surrogate - ժառանգության և որդեգրման գործերով զբաղվող դատավոր (լատ. *Sub – rogo*- լրացնել);

-*Ee, -or, -er* (մասնագիտություն, զբաղմունք) ցույց տվող գոյականակերտ նախածանցներն են հանդիպում`

Apparitor - քաղաքացիական դատարանի ծառայող, լատ. *Apparitio* é (ցածրաստիճան ծառայող);

Assessor - դատավորի օգնական, լատ. *Assessio* (կողքին գտնվել, նստել, օգնել); **Assignee** - իրավահաջորդ (լատ. *As-signacio* - ժառանգորդ);

Attestor - վկա, լատ. *testatio* (վկայություն);

Conciliator - հաշտարար միջնորդ, լատ. *Concilio*-(միացնել, միավորել, հաշտեցնել);

Doer - վստահված անձ, լատ. *do, dare* é (տալ, զոհաբերել);

Lie detector - ստահայտմաբերիչ փորձասարք , լատ. *detectio* -(հայտնաբերում, անկեղծանալ);

Obleege - պարտավորված կողմ, լատ. *obligatio*-(պարտականություններ);

Offender - օրինազանց;

First offender - առաջին անգամ դատված;

Old offender - խոռվարար, լատ. *Offendo*-(վնասել, տուժել);

Prosecutor - մեղադրող, **Public Prosecutor** - դատախազ; **Prosecutor Office** - դատախազություն; **To prosecute a claim for damages** - վնասի հատուցման հայց ներկայացնել, լատ. *Prosecutio*-(ուղեկցություն, հրաժեշտ, շարունակություն); **Promisee** - պարտավորագիր ընդունող կողմ;

Promissor - պարտավորված կողմ, լատ. *Promisio*-(խոստում);

Tutor - խնամակալ, լատ. *Tueor, tuitus, sum, eri*-(պաշտպանել, նայել, պահպանել) բառերում:

Լատիներեն սկզբնաղբյուր ունեցող մի շարք իրավաբանական բառեր կազմվել են` -*ion, -on, -tion* *գործողություն, վիճակ* ցույց տվող գոյականակերտ վերջածանցների միջոցով, օրինակ.

Declaration - հայցադիմում, լատ. *declaratio* - (հայտարարություն, հայցադիմում);

Exaction - համառ պահանջ, կորզում, կեղեքում, լատ. *Exactio* é (հարկում);

Extinction - պարտքի մարում, լատ. *Extinctio, onis*-(ձգում, ուղղում);

Probation - պայմանական ազատում, լատ. *Probo* é (փորձել, ստուգել, փորձարկել);

Reservation - իրավունքի պահպանում, լատ. *Reservo* - (խնայել, պահել);

Restitution - նախկին իրավունքների վերականգնում, լատ. Restitutio - (վերականգնում, հատուցում);

Retention - կալանավորման իրավունք, լատ. Retention, onis- (զսպում, արգելակում);

Deposition - վկայություն, լատ. Depositio, onis- (խնայողություն, վկայություն);

Eviction - ունեցվացքի բռնագանձում դատարանով, լատ. Eviction, onis- (սեփականության բռնագանձում);

Connection, criminal connection - արտամուսնական կապ, լատ. Conexio, onis- (կապ, բարոյական պարտականություն);

Conviction - դատապարտում, լատ. Convictio - (համոզեցուցիչ փաստարկ);

Legislation - օրենսդրություն, լատ. Lex, - (օրենք);

Limitation - հայցային վաղեմություն, լատ. Limito - (սահմանափակել, որոշել);

Location- վարձակալության տալ, լատ. Locus - (վայր, բնակավայր, կոչում);

Vertification - վկայություն տալ, լատ. Vere- (ճիշտ, անսխալ, անկեղծ);

Լատիներեն Clamo, are- (գոռալ, կանչել), Litigo- (վիճել, դատվել), con-veno- (համապատասխանել, համաձայնեցնել) բառերի և -ent, -ant վերջածանցների միջոցով կազմվել են՝

claimant- հայցող,

litigat - դատական կողմերից մեկը հանդիսացող անձ,

convenant- պայմանագիր:

Ֆրանսերեն ծագում ունեցող, վերացական գոյական ցույց տվող - ure վերջածանցը, միանալով լատիներեն fixus- (*ամուր, պինդ*), *lex, legis-* (*օրենք*) բառերին առաջացրել են **Fixture**- *շարժական գույք, համատեղված անշարժի գույքի հետ*, և **Legislature** - *օրենսդրական մարմին* բառերը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ լատիներեն շատ բառեր, լինելով սկզբնաղբյուր անգլերեն իրավաբանական տերմինների կազմավորման համար, բացի բառակազմական փոփոխություններից, կրել են նաև իմաստային փոփոխություններ: Օրինակ լատիներեն Absentio բառն ունի *բացակայել, հեռու լինել* նշանակությունները, իսկ որպես իրավաբանական տերմին ձեռք է բերել *հեռակա կարգով դատված լինել* նշանակությունը:

Նույնատիպ իմաստային տարբերություններ ենք տեսնում հետևյալ բառերում.

Affirm - հանդիսավոր կերպով հայտարարել, լատ. **Af-firmo**- (պնդել, հաստատել);

Appeal é բողոքարկման դատարան, լատ. Appelatio - (*դիմում, բանավոր դիմում*);

Associate - հանցակից, լատ. As-socio - (*միավորել, կապվել*);

Capital - *մահվան դատավճիռ*, լատ. Capitalis (*կյանքին վտանգ սպառնացող, վտանգավոր*);

Caption - *ձերբակալում*, լատ. Captio - (*բռնել*);

Cast - *պատասխանատվության ենթարկել հարկերը չվճարելու համար*, լատ.

Castigatio- (*պատիժ*);

Claimant – *հայցող*, **Claim** - *հայց*, լատ. Clamo, are - (*գոռալ, կանչել*);

Competence - *փոխհատուցում*, **Competent** - *լիիրավ, իրավասու*, լատ.

Competent- (համապատասխան);

Contumacy - չներկայանալ դատարան;

Contumacious - դատարանի կանչին չներկայացող անձ, լատ. *Contumacia* - (անհնազանդ);

Conversion - ուրիշի ունեցվածքի յուրացում, լատ. *Con - version*- (շրջում, շրջանաձև շարժում);

Copy - արձանագրության պատճեն, լատ. *Copia*- (ֆոնդ, միջոցներ, բազմություն, հարստություն);

Լատիներեն *crimen* (մեղք) արմատից են կազմվել՝

Crime- հանցանք, ոճիր, հանցագործություն, **Crime sheet** - պատժացուցակ, **Criminal**- քրեական հանցագործ, **Criminality** - հանցավորություն, **Criminate** - մեղադրել հանցագործություն կատարելու մեջ, **Criminal code** - քրեական օրենսգիրք, **Criminatory** - մեղադրող, մերկացնող, **Ciminology** - քրեագիտություն բառերը;

Devise - կտակ, լատ. *Divido*- (բաժանել, անջատել, տարբերել);

Domicile - կազմակերպության կամ անձի իրավաբանական, լատ. *Domicilium*- (բնակավայր, նստավայր, կենտրոն);

Examination - հետաքննություն, հարցաքննություն, լատ. *Examino* -(կշռադատել);

Except - հետաքննության բացարկ, լատ. *Exceptio* - բացառում, սահմանափակում, պայման;

Exculpate - արդարացնել, լատ. *Ex*-(զրկում), *culpa* - մեղք, հանցանք, սխալմունք;

Execute - կազմել փաստաթղթեր, ի կատար ածել, լատ. *Executio* -(իրագործում, իրականացում, գործադիր իշխանություն, ղեկավարություն);

Exhibit - իրեղեն ապացույց, լատ. *Exhibitio*- (հանձնում, ներկայացում);

Evidence - վկայություն, **Piece of evidence** - հանցանշան, **To call in evidence** - որպես վկա կանչել դատարան; **Cumulative evidence** - ամբողջ հանցանշանները; **Presumptive evidence** - ենթադրությունների վրա հիմնված ցուցմունք, լատ. *Evidence* (նկատելի, ակնհայտ);

Fixture - շարժական գույք, համատեղված անշարժ գույքի հետ, լատ. *Fixus*- (ամուր, պինդ, անշարժ);

Herbage - տարածքը որպես արոտավայր օգտագործելու իրավունք, լատ. *herba*- (խոտ, կանաչ);

Infant - անչափահաս, լատ. *Infans* - (երեխա, նորածին);

Initiative - օրենսդրական նախաձեռնության իրավունք, լատ. *Initio*- (հանգամանք, սկզբունք);

Personality - իրավաբանական անձ, լատ. *Persona* -(անձ, դեմք);

Police - ոստիկանություն, *Military police* - զինվորական ոստիկանություն, *Police constable* - ոստիկան, *Police power* - պետական անվտանգության ուժեր, *Police court* - ոստիկանության դատարան, *Police office* - քաղաքի ոստիկանության բաժանմունք, *Police station* - ոստիկանության տեղամաս, լատ. *Pol-liceor*- (սուլել, խոստանալ);

Novel -լրացուցիչ օրինականացում, լատ. *Novellae*- (նորատունկ ծառեր,

օրենսդրական լրացումներ);

Location - վարձակալության տալ, լատ. Locus- (վայր, բնակավայր, կոչում);

These presents - սույն փաստաթղթերը; **Presentment** - բողոքի պաշտոնական ուղղումը եպիսկոպոսին, լատ. **Presento** - ներկայացնել, տալ, լատ. **Prasens, entis-** (ներկա, ընթացիկ);

Principal - գլխավոր մեղադրյալ, լատ. Principalis- (առաջնային, կարևոր);

Protectory- մանկական գաղութ; լատ. Protectio, onis-(հովանավորություն, աջակցություն);

Protest - բողոք, բողոքարկում, To make a protest - բողոք ներկայացնել, Under protest - հարկադրաբար, To protest one's innocence - իրեն անմեղ հայտարարել, լատ. Protestor, ari (հանդիսավոր հայտարարել);

Proxy - 1. լիազոր, հավատարմատար. 2. քվեարկության իրավունքը մեկին հանձնել, լատ. Proxime (adv.) (մոտ, ոչ վաղուց, մոտ ապագայում);

Retention - կալանավորման իրավունք, Retentio (պահպանում);

Valid - օրինական, գործող, ուժի մեջ, լատ. Validus- (ուժեղ, պինդ, առողջ, պիտանի);

Verdict - երդվյալ ատենակալների դատարանի վճիռ, լատ. Vero- (ճշմարտությունն ասել, անկեղծանալ);

Verification - վկայություն տալ, լատ. vere -(ճիշտ, անսխալ, անկեղծ):

Հետևյալ արտահայտությունները խիստ իրավաբանական տերմիններ չեն, բայց արտացոլում են լատիներեն մտքի ճկունությունը: Ուշադրություն դարձնենք հայերեն համարժեքներին.

Ad hoc - հատուկ նպատակով

Antebellum - նախապատերազմյան

Caveat - նախազգուշացում, հորդոր

De facto - փաստորեն

Dementia - մտավոր շեղում

Ex nihilo - ոչինչ ոչնչից

In toto - ամբողջովին

Literati - գրագետ մարդիկ

Mea culpa - իմ մեղքը, սեփական մեղքի ընդունում

Modus operandi - գործունեության մեթոդ

Non compos mentis - հիվանդ միտք

Nonsequitur - անտրամաբանական ավարտ

Quid pro qua - համարժեք փոխանակում

Rara avis - տարօրինակ, անսովոր

Sub rosa - կոնֆիդենցիալ, գաղտնի

Sui generic - իր տեսակի մեջ միակ

Viva voce - ի լուր աշխարհի

Vox populi - ժողովրդի ձայնը

ԳՐԱԿԱՆՈՒԹՈՒՆ

1. **И. Х. Дворецкий**, Латинско-русский словарь, Москва, 1986
2. **В. К. Мюллер**, Англо - русский словарь, М., 1967
3. **А. Г. Саркисян, Р. Х. Акопян**, Русско-армянский словарь юридических терминов и перифраз, Ереван, 2005
4. **Հ. Ա. Ասմանգուլյան, Մ. Ի. Հովհաննիսյան**, Անգլերեն-հայերեն բառարան, Երևան, 1984
5. The Oxford Dictionary of Current English, L., 1944
6. Random House Webster's Build Your Power Vocabulary, Copyright, 1998
7. The Origins and Development of the English Language, Thomas Pyles John Algeo, 1992

ЮРИДИЧЕСКИЕ ТЕРМИНЫ ЛАТИНСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

Н. А. РАПЯН

В статье рассматриваются современные юридические термины, первоисточником которых является латинский. По мнению лингвистов большая часть лексикона английского языка имеет латинское происхождение. В английском языке современные юридические термины в основном образованы от латинских корней.

Автор раскрывает грамматические особенности юридических терминов латинского происхождения.

LEGAL TERMS OF LATIN ORIGIN IN ENGLISH

N. L. RAPYAN

The article is mainly about modern legal terms, the roots of which came from Latin language.

Scholars estimate that about half of all English words in current use are of Latin origin. So a great number of Latin words helped to shape modern legal terms. The grammatical and lexical meanings are discussed as well.

PRAGMATIC INTERFERENCE OF MODALITY

S. S. AMIRKHANYAN

GSU lecturer of english department

Modality in English and other languages has been the focus of attention of scholars from distinct disciplines and approaches over the last thirty years. Within linguistics, the study of modality has witnessed a gradual shift from a monolithic, static conception to a more **dynamic** understanding of modality taking into account the relevance of linguistic and extralinguistic contextual factors in the production and interpretation of modal utterances in discourse (Bybee & Fleischman, 1995). Modality can best be defined on the basis